# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 106

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ 5 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՑ ՄԵԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ, ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ և ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ Կառավարության 2020թ-ի մարտի 16-ի Ն-288 որոշումը և համապատասխան մարմինների ցուցումով ինքնամեկուսացված՝ սննդամթերքի և սանիտարահիգիենիկ պարագաների կարիք ունեցող անձանց աջակցելու անհրաժեշտությունը՝ ՀՀ Կառավարության 2020թ-ի մարտի 12-ի <<Գնման գործընթացները պահպանելու մասին>> 296-Ա որոշումը, Արենի համայնքի ավագանու 15.12.2017թ-ի թիվ 55-Ն որոշումը, Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի 14.05.2020թ. թիվ 1-3 որոշումները՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1)Արենի համայնքի Արենի բնակավայրում COVID 19-ի հետևանքով ինքնամեկուսացված հետևյալ 5 ընտանիքներից յուրաքանչյուրին հատկացնել 15 օրվա անհատական պաշտպանության պարագաներ և առաջին անհրաժեշտության սննդամթերք՝

1.Հմայակ Հարությունյան-6 շունչ

2.Մարիամ Սեներերիմյան-5 շունչ

3.Խաչիկ Ղազարյան-3 շունչ

4. Արտաշես Կարապետյան-4 շունչ

5. Արտակ Կարապետյան-4 շունչ:

2)Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ Արենի համայնքի յուրաքանչյուր բնակավայրից սոցիալապես անապահով, բազմազավակ 1-ական ընտանիքի հատկացնել միանվագ դրամական օգնություն 20000 ՀՀ դրամի չափով:

3)Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ նորածին երեխա ունեցող Մարինե Սերոբյանին տրամադրել միանվագ դրամական օգնություն 50000 ՀՀ դրամի չափով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 107

### ԱՐԱ ԱՐԳԱՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ/ԾՆՎԱԾ 1960Թ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> 2008 թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը՝ Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1.Ճանաչել Արա Արգամի Կարապետյանի /ծնված1960/ սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրի 10 փողոց, թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ:

2.Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը.

3.Անշարժ գույքը բավարարում է, սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 108

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱ ԱՐԳԱՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.00203 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն,26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*.

1. Ճանաչել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Արա Արգամի Կարապետյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Արենի բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 0.00203 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Արա Կարապետյանի կողմից ավել օգտագործվող 0.00203 հա բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 109

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը

Առաջարկել Արենի համայնքի ավագանուն

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1 0.03466 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0143-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 36 135 ՀՀ դրամ,

1.2 0.09108 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0143-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 94 950 ՀՀ դրամ,

1.3 0.30937 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0143-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 322 520 ՀՀ դրամ

1.4 0.39886 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0143-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը

աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 415812 ՀՀ դրամ,

1.5 0.19063 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0143-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 198 732 ՀՀ դրամ,

1.6 0.16969 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0143-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 176 902 ՀՀ դրամ,

1.7 0.89492 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-012-0139-0005, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 379 222 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.00111 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-004-0034-, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ի չափով՝ 7593 ՀՀ դրամ,

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

3.1 1.60470 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-037-0112-, 1.00390հա-ի գործառնական նշանակությունը՝ կորիզավոր պտղատու այգի, 0.60080հա-ի գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 2.041 835 ՀՀ դրամ,

3.2 0.00500 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-037-0025-, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 200 %-ի չափով՝ 22 200 ՀՀ դրամ,

4. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

4.1 0.62016 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0254-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 1 065 125 ՀՀ դրամ,

4.2 1.78307 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-006-0283-0039, 0.6994հա-ի գործառնական նշանակությունը վարելահող, 1.08367հա-ի գործառնական նշանակությունը՝ խոտհարք) գյուղատնտեսական նշանակության հողամասը

աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 1 822 975 ՀՀ դրամ,

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

5.1 0.385 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 192 020 ՀՀ դրամ,

5.2 8.59388 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0101-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 7 734 500 ՀՀ դրամ

5.3 4.50455 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-025-0107-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով՝ 2 246 644 ՀՀ դրամ;

6. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1.43016 հա (ծածկագիրը՝ 10-006-0300-0382, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնել: Մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 15 000 ՀՀ դրամ,

7. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.73342 հա (ծածկագիրը՝ 10-036-0104-0295, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնել: Մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 8 000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 110

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06.05.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 46 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ, 20.05.201ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ 26.02.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015թվականի թիվ 596-Ն, 29.06.2017թվականի թիվ 757-Ն որոշումները , Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*՝

Արենի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 06.05.2019թվականի թիվ 46 նախագծման թույլտվության, 20.05.201թվականի թիվ 11 շինարարության թույլտվության և 26.02.2020թվականի թիվ 02 ավարտականակտի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

1. Շինարարության թույլտվության և նախագծման թույլտվության մեջ <<գյուղարտադրական նշանակության կառույց>> բառերը փոխարինել <<շինության նպատակային նշանակությունը՝ արտադրական>>, տեսակը՝ գյուղատնտեսական մթերքների մթերման կետ:

2. 26.02.2020թվականի թիվ 02 շահագործման թույլտվությունը տրամադրել ՀՀ կառավարության 19.03.2015թվականի թիվ 596-Ն որոշմամբ սահմանված ձևաթղթին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 111

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.12.2019ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 282 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿԵՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԼՎԻՆԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00378ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ,Տեղական ինքնակառավարման մասին« օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 23.07.2015թվականի թիվ 828-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ սահմանված կարգը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 19.06.2020թվականի թիվ 01/07.2/3239-2020 գրությունը Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 17.12.2019թվականի թիվ 282 որոշումը,

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ալվինա Անդրանիկի Ներսիսյանի սեփականություն հանդիսացող, 0.00378 հա մակերեսով հողամասի (ծածկագիրը 10-006-0054-0022, նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման) գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման:

3. Նշված հողամասի վրա առկա .36քմ մակերեսով շինության (ծածկագիրը 10-006-0054-0022-001, նպատակային նշանակությունը հասարակական, շինության տեսակը

խանութ) նպատակային նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման, շինության տեսակը՝ բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 112

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ՀՐԱՉԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՆՈՐԱՅՐ ՌՈՒԲԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ԳՅՈՒԼՆԱՐԱ ՌՈՒԲԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 1.41178 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ 0.12303 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-510-Ն,26.12.2002թ.) 7-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Ճանաչել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչներ՝ Հրաչիկ Ռուբիկի Հակոբյանի, Նորայր Ռուբիկի Հակոբյանի և Գյուլնարա Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Աղավնաձորի բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 1.41178 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի բնակիչներ՝ Հրաչիկ Ռուբիկի Հակոբյանի, Նորայր Ռուբիկի Հակոբյանի և Գյուլնարա Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքը Արենի համայնքի Աղավնաձորի բնակավայրում գտնվող, փաստացի օգտագործվող 0.12303 հա բնակավայրերի նշանակության հողամասի նկատմամբ:

3.Նորայր Հակոբյանի և նրա ընտանիքի կողմից ավել օգտագործվող 1.41178 հա գյուղատնտեսական նշանակության և 0.12303 հա բնակավայրերի նշանակության հողամասերը չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 113

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11.03.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 066 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*.

Արենի համայնքի ղեկավարի 11.03.2020թվականի <<Ռուբիկ Համբարձումի Հակոբյանին (մահացած 2001թ.), Սուսաննա Նիկոլայի Հակոբյանին (մահացած 2018թ.) Հրաչիկ Ռուբիկի Հակոբյանին, Նորայր Ռուբիկի Հակոբյանին և Գյուլնարա Ռուբիկի Հակոբյանին համասեփականության իրավունքով պատկանող բնակելի տան և օժանդակ կառույցների սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 066 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

որոշման վերնագրից և տեքստից հանել <<Ռուբիկ Համբարձումի Հակոբյանին (մահացած 2001թ.), Սուսաննա Նիկոլայի Հակոբյանին (մահացած 2018թ.)>> բառերը և թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2020թվականի N 114

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 02.03.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 03 ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԱՐՓԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՆՈՐ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015թվականի թիվ 596-Ն որոշումը , Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 02.03.2020թվականի թիվ 03 շահագործման թույլտվությունը

2. Կառուցապատող Արփինե Զաքարյանին տրամադրել ավարտական ակտ համաձայն սույն որոշման հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**